ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (86)
2020 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.
գլխավոր խմբագրի տեղակալ
Կարեն Գևորգյան - ի.գ.թ
գլխավոր խմբագրի տեղակալ
Աշոտ Պետրոսյան -
պատասխանատու քարտուղար
Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.
Նիկոլայ Ստոյկո - ի.գ.դ.
Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.
Արմեն Հայկյանց - ի.գ.դ.
Դավիթ Ավետիսյան - ի.գ.թ.
Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.
Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.
Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.
Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47
էլ. կայք՝
http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:
12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:
e-mail: a_petrosyan@ysu.am
Դասիչ՝ 77771
Տպագրական 8 մամուլ
Գրանցման թիվը՝ 798
Տպաքանակը՝ 500
Գինը՝ պայմանագրային
Հանձնված է շարվածքի
24.12.2019
Հանձնված է տպագրության
15.05.2020

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ь Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (86)

2020 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Р е д а к ц и о н н ы й с о в е т

Самвел Дилбандян - д.ю.н.
зам. главного редактора
Карен Геворгян - к.ю.н.
зам. главного редактора
Ашот Петросян -
ответственный секретарь
Геворг Даниелян - д.ю.н.
Арутюн Хачикян - д.ю.н.
Николай Стойко - д.ю.н.
Армен Айкянц - д.ю.н.
Давид Аветисян - к.ю.н.
Артур Вагаршян - д.ю.н.
Сергей Аракелян - д.ю.н.
Ваге Оганнесян - д.ю.н.
Тарон Симонян - к.ю.н.

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 24.12.2019
Подписано к печати 15.05.2020

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Արթուր Վարդանյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն ոլորտներից է ագրոպարենային համակարգը, որը 2004-2008 թթ. ընթացքում ապահովել է երկրի համախառն ներքին արդյունքի 25.3 տոկոսը:[1] Այդուհանդերձ, պետք է նաև նկատի ունենալ, որ գյուղատնտեսությունը տնտեսության ամենազգայուն ճյուղերից է, որն ամենաշատն է տուժում բնական աղետներից: Փոքր և միջին ձեռնարկատիրությունը գյուղատնտեսության անկյունաքարն է, որի գործունեությունը պետական աջակցության շնորհիվ պետք է միտված լինի գյուղատնտեսության ոլորտում աշխատատեղերի ավելացմանը, սեզոնային տատանումների կրճատմանը, գյուղական համայնքներում ենթակառուցվածքների ներդրմանը և զարգացմանը:

Հայաստանի Հանրապետությունում փոքր չափեր ունեցող գյուղացիական տնտեսությունները, ունենալով հողօգտագործման, ջրօգտագործման, տեխնիկական ապահովման, արտադրանքի իրացման, մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության ապահովվածության հետ կապված բազմաբնույթ խնդիրներ, չունեն համագործակցության հստակ և կայուն մեխանիզմներ ու հնարավորություններ: Ստեղծված իրավիճակում կարևորվում է ագրարային ոլորտում կիրառվող տնտեսավարման ձևերի կատարելագործում՝ մասնավորապես կամավորության սկզբունքի վրա հիմնված կոոպերատիվների արմատավորման և զարգացման միջոցով, երբ դրանում ընդգրկված յուրաքանչյուր անդամի հնարավորություն է ընձեռվում առավելագույնս օգտագործել տնտեսական ներուժը՝ ապահովելով անհամեմատ բարձր եկամուտ: Շուկայական հարաբերությունների պայմաններում կոոպերացիան կարող է համակարգել տարբեր գործառույթներ ինչպես գյուղմթերքի արտադրության, այնպես էլ՝ սպասարկումների, իրացման և մատակարարման ոլորտներում:

Պետությունը ինքն էլ՝ որպես տնտեսական քաղաքականության առաջնային մշակող, կարևորում է կոոպերատիվների ստեղծումը և դրանց զարգացումը, ինչի մասին է վկայում նաև ՀՀ Կառավարության որոշումը «Գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին»[2] (այսուհետ՝ նաև Ռազմավարություն), որի 9-րդ կետի համաձայն.

«Տնտեսավարման նոր պայմաններում, երբ արմատապես փոխվել է հողօգտագործման համակարգը, և մշակովի հողատարածությունները մասնատվել են ավելի քան 1.2 մլն հողակտորների, առանձնահատուկ կարևորություն են ստանում գյուղատնտեսության արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների արդիականացումը, գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը»:

Ռազմավարության համաձայն՝ պետությունը կարևորում է ագրարային բարեփոխումների խորացումը, գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումը: Առկա խնդիրները կարող են լուծվել գյուղատնտեսության ոլորտի տնտեսավարող-

[1] Տե՛ս http://old.minagro.am , հղումը՝ 09.09.2019թ.-ի դրության տվյալներով:
[2] Տե՛ս ՀՀՊՏ 2010.12.01/60(794), ՀՀ Կառավարության որոշումը՝ 2010 թ. նոյեմբերի 4-ի թիվ 1476-Ն ՝ «Գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին»:

ներին ցուցաբերվելիք նպատակային և հասցեական աջակցության (սուբսիդավորման) մեխանիզմների մշակման և ներդրման միջոցով (Ռազմավարության 39-րդ կետի 2-րդ ենթակետ, 40-րդ կետի 7-րդ ենթակետ):

Գյուղական համայնքների զարգացման համար կոոպերատիվների մեծ ներուժի խթանումը պետք է կատարվի ինքնօգնության, խորհրդատվության, անդամների՝ աշխատանքներին մասնակցելու սկզբունքների զուգորդմամբ: Շուկայական տնտեսությունը ազդել է կոոպերատիվների վրա թե՛ դրական և թե՛ բացասական առումներով: Վերջիններս էլ իրենց ներդրումն են ունենում հասարակության զարգացման գործում՝ որպես «ժողովրդավարության ձևավորման դպրոցներ»[1]: Սեփական անդամներին ծառայություն մատուցելու առումով կոոպերատիվներն ունեն մի շարք բնորոշ հատկանիշներ, որոնցով նրանք տարբերակվում են այլ իրավաբանական անձանցից, դրանք են օրինակ՝ անդամների կարիքների վերհանումը, դրանք լավագույնս բավարարելու հնարավորությունների մշակումը, այդ նպատակին հասնելու այլ հնարավոր տարբերակների համեմատական ուսումնասիրությունը: Կոոպերատիվը հնրավորություն է տալիս իր անդամին ստանալու իր նախընտրած ապրանքը և(կամ) ծառայությունը ավելի մատչելի գնով, քան հնարավոր կլիներ որպես անհատ հանդես գալու դեպքում:

Ինչպես վկայում է Ռազմավարության և միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունը՝ գյուղատնտեսության ոլորտում կոոպերատիվ շարժման զարգացման կարևոր նախապայմաններից է հատկապես պետության ֆինանսական աջակցությունը: ԱՄՆ-ում գյուղատնտեսության ոլորտին հատկացվել է շուրջ 322 միլիարդ դոլար՝ 1995-2014 թթ.-ին, որը ներառում է բերքի ապահովագրությունը, հակահամաճարակային անվտանգությունը, պահածոյացման ծախսերը: Հնդկաստանում միայն 2011-2012 թթ.-ին գյուղատնտեսական ոլորտին պետական աջակցությունը կազմել է 42 միլիարդ ռուփի[2]:

Պետության կողմից ցուցաբերվող ֆինանսական աջակցությունը դրսևորվում է սուբվենցիաների, սուբսիդիաների, դոտացիաների և դրամաշնորհների ձևով:

Կարևորելով գյուղատնտեսության դերը պետության տնտեսական կյանքում՝ ԵՄ-ն 17.12.2013թ.-ին ընդունել է գյուղատնտեսության աջակցության վերաբերյալ 1305/2013 կարգավորումը, որի հիմնական նպատակներն են գյուղատնտեսության մրցունակության բարձրացումը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, գյուղատնտեսական համայնքների կայուն զարգացումը՝ բալանսավորված տարածաշրջանային սկզբունքով, աշխատատեղերի պահպանումը, գիտական նորարարությունների ներդրումը գյուղատնտեսության ոլորտում, կոոպերացիայի խթանումը և այլն[3]:

Ներկայումս գյուղատնտեսական կոոպերատիվներին ցուցաբերվող ֆինանսական աջակցության կառուցակարգերը դյուրացնելու նպատակով ամբողջ աշխարհում փորձ է արվում մշակել իրավական մեխանիզմներ՝ կոոպերատիվներին պետական բյուջեից ուղղակի աջակցությունը առավել հեշտ և հնարավոր դարձնելու համար: Այդ առումով հատկապես ուշագրավ է ԵՄ՝ 17.12.2013թ.-ի թիվ 1307/2013 կարգավորումը, որը գուղացիական տնտեսությունների աջակցության ոլորտում վարչարարությունը դյուրացնելու նպատակով նախատեսում է ուղղակի աջակցության մեխանիզմների ստեղծում, օրինակ՝ գյուղացիներին ուղղակի ֆինանսավորում

---

[1] Agricultural cooperative development manual, http://www.fao.org/3/a-x0475e.pdf. 30.09.2019թ.-ի դրությամբ, 30.09.2019թ.-ի դրությամբ:

[2] S.S.Johl Agricultural Subsidies, https://www.sciencedirect.com/topics/agricultural-and-biological-sciences/agricultural-subsidies, 30.09.2019թ.-ի դրությամբ:

[3] Տե՛ս Consolidated version of the Treaty of functioning EU https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2013:347:0487:0548:en:PDF էջ 15, 15.09.2019թ.-ի դրությամբ, 30.09.2019թ.-ի դրությամբ:

ցուցաբերելու հնարավորությունների նախատեսում[1]: Կարգավորման 8-րդ կետի համաձայն՝ ուղղակի հատկացումները տրամադրվելու են մինչև 2000 եվրոյի չափով: Բուլղարիայում և Ռումինիայում կարգավորումները սկսել են գործել 2016թ.-ի հունվարի 1-ից, իսկ Խորվաթիայում կկիրարկվի՝ 2022թ.-ի հունվարի 1-ից: Կարգավորման համաձայն՝ անդամ պետությունները պետք է ձեռնպահ մնան սուբվենցիաներ տրամադրելուց այն անձանց, որոնց գործունեության մեջ գյուղատնտեսությունը կազմում է քիչ տոկոս կամ հիմնական ուղությունը չէ: Պետք է ձեռնպահ մնալ նաև այնպիսի սուբյեկտների հատկացումներ անելուց, որոնք գյուղատնտեսությամբ են զբաղվում ժամանակավորապես[2]:

Ուշագրավ է, որ ՀՀ ներպետական կարգավորումները ևս թույլ են տալիս, որ կոոպերատիվները անմիջապես պետական բյուջեից ներգրավեն ֆինանսական միջոցներ՝ սուբսիդիաներ և(կամ) դրամաշնորհներ: Ընդ որում, ՀՀ Կառավարության որոշման 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձանց հատկացումները կարող են տրամադրվել նաև անմիջապես պետական բյուջեից[3]: Այդ որոշմամբ կազմակերպությանը սուբսիդիա կամ դրամաշնորհ տրամադրվում է կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա (Որոշման 2-րդ կետ):

Ընդ որում հարկ է նկատել, որ սուբսիդիան տրամադրվում է կազմակերպության գործունեության հետ կապված վնասը ծածկելու նպատակով (Որոշման 3-րդ կետ): Իսկ Որոշման 4-րդ կետի համաձայն. «դրամաշնորհը տնտեսության որևէ ճյուղի կամ գործունեության որևէ տեսակի խթանման նպատակով բյուջեից կազմակերպությանն իր կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական հատկացումն է»:

Հետևաբար գյուղատնտեսական կոոպերատիվների առաջ ծառացած խնդիրները լուծելու համար առավել արդյունավետ կլինի՝ վերջիններիս տրամադրվեն կոնկրետ նպատակային դրամաշնորհներ: Դրամաշնորհները պետք է նպաստեն մանր և միջին ձեռնարկատերերի մրցունակության բարձրացմանը, այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ տնտեսական և տեխնիկական հագեցվածություն ապահովելուն, անհրաժեշտ նվազագույն գիտելիքներ և լավագույն փորձ ձեռք բերելուն: Այդ ուղղությամբ գյուղատնտեսության լավագույն աջակիցները կարող են լինել խորհդատվական կազմակերպությունները[4]:

Մեր հանրապետությունում ևս կարևորվում է գյուղատնտեսական կոոպերատիվներին ցուցաբերվող պետական աջակցությունը, որի մասին է վկայում այն հանգամանքը, որ «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի[5] 29-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրվել է պետության պարտավորությունը գյուղատնտեսական կոոպերատիվներին շարունակական աջակցություն (այդ թվում՝ ֆինանսական) ցուցաբերելու վերաբերյալ: Նշված դրույթի համաձայն՝ «Պետությունը

---

[1] Տե՛ս Regulation (EU) No 1305/2013 of the European Parliament and of the Council of 17 december 2013 https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:12012E/TXT&from=EN/ 02.08.2019թ.-ի դրությամբ, 30.09.2019թ.-ի դրությամբ:

[2] Տե՛ս Regulation (EU) No 1307/2013 OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 17 december 2013 https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2013:347:0608:0670:EN:PDF 20.08.2019թ.- դրությամբ:

[3] Տե՛ս ՀՀ կառավարության՝ 24-ը դեկտեմբերի 2003 թվականի թիվ 1937-Ն որոշումը ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին (1-ին կետ): ՀՀՊՏ 2004.03.10/14(313) ,

[4] Տե՛ս Regulation (EU) No 1305/2013 of the European Parliament and of the Council of 17 december 2013 on the financing, management and monitoring of the common agricultural policy for rural development by the European Agricultural Fund for Rural Development (EAFRD) and repealing Council Regulation (EC) No 1698/2005:

[5] Տե՛ս ՀՀ օրենքը «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀՊՏ 2015.12.30/91(1180):

սուբսիդավորման, նպատակային ծրագրերի իրագործման, բարենպաստ օրենսդրական դաշտի ձևավորման միջոցով խթանում է գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը, ագրոպարենային համակարգում կոոպերատիվների ստեղծումը, վերջիններիս գիտական, կադրային, տեղեկատվական և խորհրդատվական ապահովումը»:

Հարկ է հաշվի առնել նաև, որ գյուղատնտեսության ոլորտին պետական աջակցությունը պետք է հիմնվի այնպիսի սկզբունքների վրա, ինչպիսիք են հողային ռեսուրսների օգտագործման մակարդակի բարձրացումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, արտահանման խթանումը, արդիական տեխնոլոգիաների ներդրումը և այլն[1]:

Գյուղատնտեսության ոլորտում ցուցաբերվող պետական աջակցությունը դրսևորվում է 2 մակարդակով. ա) պետական բյուջեից հատկացումները կատարվում են համայնքային բյուջեին, որից հետո բաշվում են գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների միջև (այսուհետ՝ կներկայացվի կոոպերատիվների օրինակով), բ) հատկացումները պետական բյուջեից կատարցում են անմիջապես կոոպերատիվներին:

Պետական բյուջեից հատկացումները կարևոր են տեղական կառավարման համակարգի պատշաճ գործունեությունն ապահովելու տեսանկյունից, քանի որ սեփական եկամուտներն անբավարար են տարածքային ենթակառուցվածքը պահպանելու, պետական կառավարման գործառույթներն իրականացնելու և սոցիալական ու տնտեսական զարգացման ծրագրերում ներդրումներ անելու համար:

Պետական բյուջեից համայնքներին հատկացումների երկու տեսակ գոյություն ունի.

- համահարթեցման դոտացիաներ,
- նպատակային սուբվենցիաներ:

Համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) սահմանվում է օրենքով և կազմում է ոչ պակաս, քան տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի 4%-ը: Նպատակային սուբվենցիաները որևէ սահմանաչափ չունեն, քանի որ որոշվում է կառավարության ու տեղական իշխանությունների բանակցությունների միջոցով: Պետական բյուջեից տարեկան հատկացումների ընդհանուր մասնաբաժինը կազմում է համայնքային բյուջեների մոտ 50%-ը:

ՀՀ պետական բյուջեից հատկացումների բարձր մակարդակը տեղական իշխանությունների գործունեության քաղաքական և ռազմավարական վերահսկողության արդյունավետ միջոց է:

Սուբվենցիաները կարգավորվում են Կառավարության ընդունած որոշումներով և միտված են համայնքների միջև սոցիալական ու տնտեսական անհամաչափությունները նվազեցնելուն և մեծամասամբ ուղղված են համայնքային սեփականության պահպանմանն ու վերականգմանը, ինչպես նաև՝ հիմնական ենթակառուցվածքներում ներդրումների իրականացման[2]:

Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի հոդված 20 մաս 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն. «Պետական բյուջեի ծախսերում կարող են նաև նախատես-

---

[1] Տե՛ս ՀՀ կառավարության՝ 13 ապրիլի 2017 թվականի N 363-Ն որոշումը «Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագրի մշակման և հաստատման կարգը սահմանելու մասին» ՀՀՊՏ 2017.04.19/24(1299):

[2] Տե՛ս Քաղվածք Կառավարության՝ 29 հուլիսի 2016 թվականի նիստի արձանագրությունից (N 29) Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին:

վել համայնքների բյուջեներին հատկացվող սուբվենցիաներ՝ համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ: Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավասու է հետ պահանջել համայնքից պետական բյուջեից համայնքին հատկացված սուբվենցիաների ոչ նպատակային ծախսված գումարները: Սուբվենցիաների տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով»:

Սուբվենցիաները տրամադրվում են բյուջետային մի համակարգից մյուսին՝ պետական բյուջեից համայնքային բյուջեին: Իրավաբան-գիտնականների կարծիքով՝ սուբվենցիան (լատիներեն subvenire-օգնության հասնել) վերադաս մակարդակի բյուջեից որոշակի ժամկետով և կոնկրետ նպատակի համար տրամադրվող դրամական գումարն է[1]: Սուբվենցիաները չեն կարող տրամադրվել անմիջապես կոոպերատիվներին: Այսպիսով, սուբվենցիան համայնքներին և կամ իրավաբանական անձանց տրամադրվող անհատույց և անվերադարձ դրամական միջոցներ են՝ կոնկրետ նպատակների իրականացման համար[2]: Սուբվենցիան տրամադրվում է որոշակի ժամանակահատվածի համար, նախատեսված է կոնկրետ ծրագիր իրականացնելու համար և ենթակա է վերադարձման, եթե ծրագիրը հաջողությամբ չի ավարտվել[3]:

ՀՀ Կառավարության 16.06.2006 թ. թիվ 1708-Ն որոշման 1-ին հավելվածի 3-րդ կետի համաձայն. «Սուբվենցիաները համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներն են»[4]:

Հաշվի առնելով, որ ՀՀ ներպետական կարգավորումները նախատեսում են սուբվենցիաների տրամադրումը համայնքներին, հետևաբար համայնքները պետք է կնքեն համապատասխան պայմանագրեր տվյալ համայնքում գրանցված կոոպերատիվների հետ սուբվենցիաներով նախատեսված ծրագրերի իրականացման համար, որոնք պետք է սահմանափակվեն կոնկրետ ժամկետով, և այն պարագայում, երբ կոնկրետ ծրագրի շրջանակներում տրամադրված գումարը չի ծախսվի պայմանագրով նախատեսված նպատակներով, և կամ գումարը ստացողի մեղքով ծրագիրը չի պսակվի հաջողությամբ, այն ենթակա կլինի վերադարձման համայնքային բյուջե: Հետևաբար տրամադրված սուբվենցիաների ենթակա են կրկնակի հսկողության. նախ՝ բյուջետային համակարգից տրամադրված սուբվենցիաների նկատմամբ հսկողություն է իրականացնում պետական կառավարման համակարգի լիազոր մարմինը, իսկ համայնքների կողմից կոոպերատիվներին բաշխված սուբվենցիաների և վերջիններիս նպատակային օգտագործման նկատմամբ՝ համայնքը:

Համայնքին տրամադրված սուբվենցիայի գումարը պետք է ծախսվի բացառապես կոնկրետ համայնքի շրջանակներում և պետք է տրամադրվի միայն այն կոոպերատիվներին, որոնք գործունեություն են իրականացնում տվյալ համայնքի տարածքում:

---

[1] Տե՛ս Большой юридический словарь. –М.: ИНФРА-М., 1997, էջ 661:

[2] Տե՛ս Об утверждении методических рекомендаций по бухгалтерскому учету государственных субсидий и других видов государственной помощи: приказ Минсельхоза России от 02.02.2004 № 75.

[3] Տե՛ս Анализ видов форм государтсвенной помощи и порядок ее предоставления сельскохозяйственным товаропроизводителям, analiz-vidov-form-gosudarstvennoy-pomoschi-i-poryadok-ee-predostavleniya-selhoztovaroproizvoditelyam.pdf, հղումը 10.09.2019թ.-ի դրությամբ:

[4] Տե՛ս ՀՀ Կառավարության 16.06.2006թ.-ի թիվ 1708-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին ՀՀՊՏ 2006.12.20/64(519):

Պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիաները ներկայացվում են Կառավարության կողմից Ազգային Ժողովին բյուջեի մասին օրենքը ընդունելիս՝ որպես օրենքի հավելված: Սուբվենցիայի նպատակային նշանակությունը կարող է տարբեր լինել, մասնավորապես՝ նյութատեխնիկական բազայի կատարելագործում, մթերքների պահեստավորման համար համապատասխան հնարավորությունների ստեղծում, գյուղմթերքների վերամշակման համար անհրաժեշտ տեխնիկայի ձեռքբերում, կաթնամթերքի սառեցման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, պահեստավորման ֆինանսավորում, փոխադրամիջոցի ձեռքբերման ֆինանսավորում և կամ լիզինգի տոկոսագումարների հատուցում: Մեր կարծիքով, սուբվենցիաների հիմնարար ուղղություններից պետք է լինեն նաև ազգային գյուղատնտեսական արտադրանքի արտահանման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, օժանդակումը:

Այսպիսով, գյուղատնտեսական կոոպերատիվներին ցուցաբերվող ֆինանսական աջակցությունը կոոպերացիան զարկ տալու ամենաարդյունավետ գործիքներից է, որի կարևորության մասին է վկայում նաև Ռազմավարության 2-րդ Հավելվածի (գյուղում առկա խնդիրների լուծմանը միտված գործողությունների ծրագիր) 42-րդ կետը, որի համաձայն՝ գյուղում առկա խնդիրները կարող են լուծվել գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների և մեխանիզմների կատարելագործման և ծրագրերի իրականացման միջոցով:

Գյուղատնտեսության կայուն զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է նախանշել մի քանի արմատական առաջնահերթություններ, ինչպիսիք են, օրինակ, գիտական նորարարությունների ներդրումը գյուղատնտեսության ոլորտում, գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ կառավարումը: Գյուղատնտեսության ոլորտում յուրաքանչյուր ծրագիր պետք է մշտական վերահսկողության առարկա լինի:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ սուբվենցիաները կոոպերատիվների մեջ բաշխելու փուլում հնարավոր սուբյեկտիվ ռիսկերը նվազագույնի հասցնելու, ինչպես նաև կոոպերատիվներին տրամադրվող ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ հսկողությունն առավել արդյունավետ դարձնելու համար առաջարկում ենք օրենսդրորեն նախատեսել որոշակի կառուցակարգեր՝ որպես օժանդակություն ցուցաբերելու նախապայման, և սահմանել որոշակի հսկողական մեխանիզմներ: Մասնավորապես առաջարկում ենք՝ «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 29.1 հոդվածով.

Հոդված 29.1 Պետության կողմից ցուցաբերվող ֆինանսական աջակցությունը կոոպերատիվներին.

1. Պետության կողմից ցուցաբերվող ֆինանսական աջակցության շահառուները պետք է լինեն փոքր և միջին ձեռնարկությունները (կոոպերատիվները, որոնց տարեկան շրջանառությունը չի գերազանցում 58 մլն դրամը)[1]:

2. Կոոպերատիվների ֆինանսական աջակցությունը տրամադրվում է նրանց ներկայացրած հայտի հիման վրա, որի բավարարման դեպքում կոոպերատիվի հետ կնքվում է քաղաքացիաիրավական պայմանագիր:

3. Աջակցությունը պետք է տրամադրվի բացառապես այն կոոպերատիվներին, որոնց գործունեության հիմնական ուղղությունը գյուղատնտեսական գործունեությունն է, և այդ գործունեությունից ստացվող հասույթը կազմում է կոոպերատիվի համախառն եկամտի առնվազն 80 տոկոսը:

---

[1] Տե՛ս REGULATION (EU) No 1305/2013 OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 17 december 2013 on support for rural development by the European Agricultural Fund for Rural Development (EAFRD) and repealing Council Regulation (EC) No 1698/2005 https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2013:347:0487:0548:en:PDF, էջ 5, հղումը՝ 21.09.2019թ.-ի դրությամբ:

4. Համայնքային բյուջեից աջակցություն ստանալու համար կոոպերատիվը մինչև հայտը ներկայացնելու օրը պետք է տվյալ համայնքում գործունեություն իրականացրած լինի առնվազն երկու տարի:

5. Ֆինանսական աջակցություն ստացած կոոպերատիվները պարտավոր են ներկայացնել կիսամյակային հաշվետվություն ստացած միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ:

6. Ֆինանսական աջակցություն ստացած կոոպերատիվները ենթակա են ամենամյա աուդիտի մինչև պայմանագրով նախատեսված ժամկետում համապատասխան նպատակին հասնելը, իսկ եթե նպատակին հասնելը անհնար է եղել կոոպերատիվից անկախ հանգամանքներով, ապա մինչև պայմանագրի ժամկետի ավարտը:

7. Աջակցություն ստացած կոոպերատիվը չի կարող դադարեցնել իր գործունեությունը պայմանագրով նախատեսված ժամկետի ընթացքում:

8. Աջակցության նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն է իրականացնում պետական լիազոր մարմինը (եթե աջակցությունը տրամադրվել է անմիջապես բյուջեից) և(կամ) համայնքը:

9. Ֆինանսական միջոցների ոչ նպատակային օգտագործման փաստ հայտնաբերվելու դեպքում կոոպերատիվը պարտավոր է վերադարձնել ստացված գումարը ծանուցում ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

10. Գյուղատնտեսական կոոոպերատիվներին հատկացումները պետք է համապատասխանեն ներկայացված ծրագրին և լինեն ողջամիտ»[1]:

ГОСУДАРСТВЕННАЯ ФИНАНСОВАЯ ПОДДЕРЖКА КАК СРЕДСТВО СОДЕЙСТВИЯ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫМ КООПЕРАТИВАМ

Артур Варданян
Аспирант кафедры гражданского права ЕГУ

В статье анализируется правовая сущность видов государственной финансовой поддержки. В статье также указаны проблемы правового регулирования в правовых актах, указана международная практика и правовые концепции видов государственной финансовой поддержки в сельскохяйственной сфере в разных странах ЕС, а также в США и в других странах. Учитывая важность новых правовых регулирований, был предложен ряд концепций, направленных на повышение эффективности правовых регулирований механизмов финансовой подержки.

[1] Առաջարկները անելիս հիմք են ընդունվել ԵՄ մի շարք իրավական ակտեր, գլխավորապես՝ ԵՄ Խորհրդարանի կարգավորումը գյուղատնտեսության զարգացման վերաբերյալ, տե՛ս REGULATION (EU) No 1305/2013 OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 17 december 2013 on support for rural development by the European Agricultural Fund for Rural Development (EAFRD) and repealing Council Regulation (EC) No 1698/2005:

STATE FINANCIAL SUPPORT AS A MEANS OF PROMOTING AGRICULTURAL COOPERATIVES

Artur Vardanyan
PhD student of the YSU Chair of Civil Law

The article analyzes the legal nature of the types of state financial support to agricultural cooperatives. The article also indicates the problems of the current regulation in legal acts, indicates international practice and legal concepts of types of state financial support in the agricultural sphere in different EU countries, as well as in the United States and other countries. Realizing the importance of new legal regulations, we have proposed a number of concepts aimed to improving the efficiency of legal regulation of financial support mechanisms.

Բանալի բառեր- *կոոպերատիվ, պետական աջակցություն, ֆինանսական աջակցություն, սուբսիդիա, սուբվենցիա*
Ключевые слова- *кооператив, государственная поддержка, финансовая поддержка, субсидия, субвенция*
Key words- *cooperative, state support, financial support, subsidy, subvention*